ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/10259/02/25

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

13 հոկտեմբերի 2025թ.

ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Սյունիք» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքի՝ թիվ ԱՄԱՀ-ԱՊՄ-ԳՀԱԾՁԲ-22/39 և թիվ ԱՄԱՀԱՊՄ-ԳՀԱԾՁԲ-22/39-1 պայմանագրերով նախատեսված աշխատանքներն ընդունելու համար հանձնաժողով ձևավորելուն պարտավորեցնելու, թիվ ԱՄԱՀԱՊՄ-ԳՀԱԾՁԲ-22/39-1 պայմանագրով նախատեսված աշխատանքների գումարը և դրա նկատմամբ հաշվարկվող տույժը վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Սյունիք» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ. սեպտեմբերի 29-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքի՝ թիվ ԱՄԱՀ-ԱՊՄ-ԳՀԱՇՁԲ-22/39 և թիվ ԱՄԱՀԱՊՄ-ԳՀԱՇՁԲ-22/39-1 պայմանագրերով նախատեսված աշխատանքներն ընդունելու համար հանձնաժողով ձևավորելուն պարտավորեցնելու, թիվ ԱՄԱՀԱՊՄ-ԳՀԱՇՁԲ-22/39-1 պայմանագրով նախատեսված աշխատանքների գումարը և դրա նկատմամբ հաշվարկվող տույժը վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Դատարանի 2025թ. հոկտեմբերի 3-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Որոշումը ստանալուց հետո հայցադիմումը սահմանված ժամկետում կրկին ներկայացվել է դատարան:

Կրկին ներկայացված հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2025թ. հոկտեմբերի 7-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2025թ. հոկտեմբերի 8-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2025թ. սեպտեմբերի 29-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Սյունիք» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքի՝ թիվ ԱՄԱՀ-ԱՊՄ-ԳՀԱՇՁԲ-22/39 և թիվ ԱՄԱՀԱՊՄ-ԳՀԱՇՁԲ-22/39-1 պայմանագրերով նախատեսված աշխատանքներն ընդունելու համար հանձնաժողով ձևավորելուն պարտավորեցնելու, թիվ ԱՄԱՀԱՊՄ-ԳՀԱՇՁԲ-22/39-1 պայմանագրով նախատեսված աշխատանքների գումարը և դրա նկատմամբ հաշվարկվող տույժը վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2025թ. սեպտեմբերի 29-ին:

Թիվ ԵԴ2/10259/02/25 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ

դատական ակտը հրապարակել 2025թ. նոյոմբերի 21-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով։

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման։

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2025.10.13 10:23:06 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am